ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/192

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. թիվ 27/26-3/23225-18 գրությամբ Ա/Ձ Գոռ Աբրահամյանին (ՀՎՀՀ 45139035) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի 07.12.2018թ. թիվ 73 գրության հիման վրա, 13.12.2018թ. նախաձեռնել է Ա/Ձ Գոռ Աբրահամյանին (այսուհետ՝ նաև Ա/Ձ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 07.12.2018թ. թիվ 73 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ վերջինիս ներկայացնելով «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգին հայտ ներկայացրած Ա/Ձ Գոռ Աբրահամյանի ներկայացրած հայտարարությունը մասնակցության իրավունքի պահանջների համապատասխանելու մասին, ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկված հարցման, և ՀՀ ֆինանսների նախարարության համապատասխան եզրակացության պատճենները, ինչպես նաև «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի մոտ ընթացակարգի քննության նպատակով գումարվող նիստերի ժամանակացույցի մասին, սակայն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>Ա/Ձ Գոռ Աբրահամյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Գոռ Աբրահամյանը 24.12.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ա/Ձ-ն 20.11.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին: Հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ըստ www.taxservice.am հարկային ծրագրի միջոցով ստացված տվյալների, Ա/Ձ-ն ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել: Սակայն, ՀՀ ԿԱ ՊԵԿ իրականացված հարցմամբ պարզվել է, որ Ա/Ձ Գոռ Աբրահամյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 92,500 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն: Ա/Ձ-ի կողմից կատարված

ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նշված ժամկետանց պարտավորությունը առաջացել է դրոշմանիշային վճարի հաշվին, որը, համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, չի հանդիսանում հարկային պարտավորություն:

Հարկ է նշել, որ օրենսդրությամբ սահմանված չեն նաև դրոշմանիշային վճարի ժամկետանց լինելու պայմանները: Բացի այդ, Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է գերավճար, բայց քանի որ դրոշմանիշային վճարը չի հանդիսանում հարկային պարտավորություն, այդ իսկ պատճառով գերավճարի հետ չի հաշվանցվել»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Սահակ Առաքելյանը, Արարատ Ռուստամյանը և Սեյրան Գասպարյանը:

4. <u>ԳՍՑ-ԷՍ-2018/192 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. թիվ 27/26-3/23225-18 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը 07.12.2018թ. թիվ 73 գրությունը, «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 20.11.2018թ. նիստի թիվ 2 և 30.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությունները, Ա/Ձ Գոռ Աբրահամյանի 24.12.2018թ. կողմից Բողոքներ քննող անձին ներկայացրած դիրքորոշումը, Ա/Ձ Գոռ Աբրահամյանի մասնակցության հայտի պատճենը.

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ը կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել Ա/Ձ Գոռ Աբրահամյանը:

Ա/Ձ Գոռ Աբրահամյանը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 20.11.2018թ. նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 30-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Գոռ Աբրահամյանի կողմից ներկայացված գնային առաջարկը կազմել է 1,268,520 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ), որով Ա/Ձ-ն ճանաչվել է նույն չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 28.11.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ա/Ձ Գոռ Աբրահամյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 20.11.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 92,500 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 30.11.2018թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ա/Ձ Գոռ Աբրահամյանը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ, և որոշել է Ընթացակարգը նույն չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստում Ա/Ձ-ն հայտնել է, որ 20.11.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին՝ հիմք ընդունելով www.taxservice.am հարկային ծրագրի միջոցով ստացված տվյալները, Ա/Ձ-ն ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել: Ըստ այդմ, Ա/Ձ-ն, վստահ լինելով, որ չունի ժամկետանց որևէ պարտավորություն՝ հայտ է ներկայացրել Ընթացակարգին, և միայն պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունն ստանալուց հետո տեղեկացել է առկա պարտավորության մասին:

ՀՀ ԿԱ ՊԵԿ իրականացված հարցմամբ պարզվել է, որ Ա/Ձ Գոռ Աբրահամյանի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցած 92,500 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է դրոշմանիշային վճարի հաշվին: Ա/Ձ-ի ներկայացուցիչը հավելեց նաև, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ա/Ձ-ն ունեցել է գերավճար, բայց քանի որ դրոշմանիշային վճարը չի հանդիսանում հարկային պարտավորություն, ուստի այն գերավճարի հետ չի հաշվանցվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

• 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

• 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՀԴ-ԳՀԱՊՁԲ-19/1-80» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում սույն ենթակետում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ Կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.12 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

- 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Նույն հրավերի 7.14-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Նույն կետով նախատեսված լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց՝

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 21.11.2018թ. Ա/Ձ Գոռ Աբրահամյանին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 19.11.2018թ. դրությամբ ունեցել է 92,500 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով հարկային

պարտավորություն, ինչպես նաև միասնական հաշվում առկա 9,755 ՀՀ դրամի չափով դեբետային մնացորդ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 19.11.2018թ. Ա/Ձ Գոռ Աբրահամյանին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, որի համաձայն Ընկերությունը 20.11.2018թ. դրությամբ ունեցել է 225,400 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն՝ եկամտային հարկի գծով, 2,744 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն՝ սոցիալական վճարի գծով, 92,500 ՀՀ դրամ հարկային պարտավորություն՝ դրոշմանիշային վճարի գծով:

- Ա/Ձ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքը, որի համաձայն Ընկերությունը 20.11.2018թ. դրությամբ ունեցել է 225,400 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն՝ եկամտային հարկի գծով, և 2,744 ՀՀ դրամի չափով հարկային պարտավորություն՝ սոցիալական վճարի գծով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ

քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված՝ եկամտային հարկը հարկային գործակալի կողմից հաշվարկելու, պահելու և պետական բյուջե վճարելու դեպքերում եկամտային հարկի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային գործակալները Օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարները պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել են վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների հետևյալ հարկատեսակները՝ ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ, ակցիզային հարկ, շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, բնապահպանական հարկ, ոչ ռեզիդենտի շահութահարկ, սոցիալական վճար, պետական տուրք, բնօգտագործման վճար, այլ հարկային եկամուտներ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանով սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճարների պարտավորության գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը որոշում է կայացնում դրոշմանիշային վճար վճարողից (եթե դրոշմանիշային վճարը, սույն օրենքի համաձայն, պետք է կատարվի հարկային գործակալի միջոցով, ապա հարկային գործակալից) ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում դրոշմանիշային վճար վճարողին (հարկային գործակալին):

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 28.11.2018թ. տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ա/Ձ Գոռ Աբրահամյանը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 20.11.2018թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 92,500 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

- Ա/Ձ Գոռ Աբրահամյանի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունն առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևը, որտեղ «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

- 20.11.2018թ. դրությամբ Ա/Ձ-ի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի եզրակացության մեջ արձանագրված՝ դրոշմանիշային վճարի գծով 92,500 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորությունն արտացոլված չի եղել:

- Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրը ղեկավարվել է հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքում արտացոլված տեղեկատվությամբ, ըստ որի՝ նույն օրվա դրությամբ Ա/Ձ-ն որևէ ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում Ա/Ձ Գոռ Աբրահամյանի գնման գործընթացին հետագա մասնակցության դադարեցումը պայմանավորված է եղել Ա/Ձ-ի իրազեկված չլինելու հանգամանքով, քանի որ Ա/Ձ-ն արձանագրված հարկային պարտավորության առկայության վերաբերյալ տեղեկատվությունը կարող էր ստանալ բացառապես Ա/Ձ-ի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից, հետևաբար Ա/Ձ Գոռ Աբրահամյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 13.12.2018թ. թիվ 27/26-3/23225-18 գրությամբ Ա/Ձ Գոռ Աբրահամյանին (ՀՎՀՀ 45139035) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված

բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ